

Գրանցված է
նոր խմբագրությամբ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

4 օգոստոսի 2009թ.

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄԱՍԻՆ
ԿԱՆՈՆՆԵՐ
(նոր խմբագրություն)

Սույն կանոնները մշակված են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) և «ՆԱՄԳԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) կանոնների համաձայն:

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Գլուխ 1. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները

- 1) Սույն կանոններում օգտագործված հասկացությունները ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «**Հանձնաժողով**». Բորսայի կարգապահական հանձնաժողով:
- 3) «**Կարգապահական խախտում**». Շուկայի մասնակցի, նրա կազմում կամ անունից գործող անձի կամ առևտրի մասնակցի կողմից Օրենքով, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված պահանջի կամ պահանջների խախտումով կատարված այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար Բորսայի կանոններով սահմանված է պատասխանատվություն:
- 4) «**Կարգապահական տույժ**». կարգապահական խախտման համար Բորսայի կողմից սահմանված դրամական և ոչ դրամական պատասխանատվության միջոց:
- 5) «**Նվազագույն աշխատավարձ**». Հայաստանի Հանրապետության «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքով սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի դրույքաչափ:
- 6) «**Սահմանված ժամկետ**». կարգապահական խախտումը վերացնելու համար Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետ, բայց ոչ ավել, քան 60 (վաթսուն) օր:
- 7) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Կարգապահական տույժերի ձևերը և դրանք կիրառող մարմինները

- 1) Կարգապահական խախտումներ կատարելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝
 - ա) նախազուշացում,
 - բ) տուգանք,
 - գ) առևտրի իրավունքի կասեցում,
 - դ) շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում,
 - ե) անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:
- 2) Նախազուշացումը, որպես կարգապահական տույժի միջոց, կիրառվում է սույն կանոններով նախատեսված կարգապահական խախտումների համար և արվում է գրավոր:
- 3) Տուգանքը դրամական տույժ է, որը կիրառվում է դիտավորությամբ, անզուշույթյամբ կամ պարբերաբար կատարված սույն կանոններով սահմանված կարգապահական խախտման համար:
- 4) Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցումը, որպես կարգապահական տույժի միջոց, կիրառվում է միայն Շուկա ստեղծողի կարգավիճակ ունեցող Բորսայի անդամների վրա՝ Բորսայի կանոններով Շուկա ստեղծողին և նրա գործունեությանը ներկայացվող պահանջների խախտման համար:
- 5) Առևտրի իրավունքի կասեցումը պատասխանատվության խիստ միջոց է և կիրառվում է սույն կանոններով սահմանված առավել նշանակալի խախտումների համար:
- 6) Անդամության կամ շուկային մասնակցության դադարեցումը կարգապահական պատասխանատվության բացառիկ միջոց է և կիրառվում է սույն կանոններով սահմանված առավել նշանակալի խախտումների համար: «Անդամության դադարեցում» կամ «Շուկային մասնակցության դադարեցում» կարգապահական տույժի կիրառման հիմքերի դեպքում Հանձնաժողովը համապատասխան տույժի կիրառման միջնորդությամբ դիմում է Բորսայի Դիտորդ խորհրդին:
- 7) Սույն կանոններով նախատեսված տույժերը կիրառվում են Հանձնաժողովի կողմից:
- 8) Հանձնաժողովը, քննելով խախտման հանգամանքները, այդ թվում շուկայի մասնակցի կողմից խախտման վերացմանն ու հետագայում բացառմանն ուղղված գործողությունները և նույն խախտման կրկնման ժամանակահատվածը, իրավունք ունի կիրառել տվյալ խախտման համար նախատեսված կարգապահական տույժից սույն կանոններով նախատեսված ավելի մեղմ տույժ, բացառությամբ սույն կանոնների 6, 7, 9 գլուխներով և 8-րդ գլխի 1-ին կետի ե) ենթակետով նախատեսված խախտումների:

Գլուխ 3. Մի քանի կարգապահական խախտումներ կատարելու դեպքում կարգապահական տույժի նշանակումը

- 1) Երկու կամ ավելի կարգապահական խախտում կատարելու դեպքում կարգապահական տույժը նշանակվում է յուրաքանչյուր կարգապահական խախտման համար առանձին, բացառությամբ սույն գլխի 2-րդ կետով նախատեսված դեպքի:
- 2) Այն դեպքում, երբ միևնույն ոչ դիտավորյալ արարքը (վարքագիծը) անմիջականորեն հանգեցրել է Բորսայի կանոնների մի քանի խախտումների, կարգապահական տույժը կիրառվում է միայն այն կարգապահական խախտման համար, որի համար նախատեսված է կարգապահական տույժի առավելագույն հնարավոր չափ:

Գլուխ 4. Կարգապահական տույժի կիրառման առանձնահատկությունը

- 1) Շուկայի մասնակցի կազմում կամ անունից գործող անձի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում պատասխանատվությունը կրում է Շուկայի մասնակիցը:

ԲԱԺԻՆ II. ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

Գլուխ 5. Բորսայի կանոնների պահանջները խախտելը

- 1) Բորսայի կանոնների պահանջը խախտելը (բացառությամբ սույն բաժնի այլ գլուխներով սահմանված կարգապահական խախտումների) առաջացնում է՝

նախազգուշացում՝ կարգապահական խախտումը վերացնելու հանձնարարությամբ կամ առանց դրա:

- 2) Սույն գլխի 1) կետով սահմանված կարգապահական խախտման համար սույն գլխի 1) կետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից երեք ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը կամ տրված հանձնարարականը չկատարելը առաջացնում է՝

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ կարգապահական խախտումը վերացնելու հանձնարարությամբ կամ առանց դրա:

- 3) Սույն գլխի 2) կետով սահմանված կարգապահական խախտման համար սույն գլխի 1) կետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը կամ տրված հանձնարարականը չկատարելը առաջացնում է՝

ա) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկի չափով և առևտրի իրավունքի կասեցում մեկ ամիս ժամկետով կամ

բ) անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

Գլուխ 6. Գնային չարաշահում կատարելը

- 1) Բորսայական առևտրին թույլատրված ֆինանսական գործիքով գնային չարաշահում կատարելը առաջացնում է՝

ա) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկից մինչև հինգ հարյուրապատիկի չափով և առևտրի իրավունքի կասեցում մեկ ամիս ժամկետով կամ

բ) անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

- 2) Սույն գլխի 1) կետով սահմանված կարգապահական խախտման համար սույն գլխի 1) կետի ա) ենթակետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից վեց ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը առաջացնում է՝

տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկի չափով և անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

Գլուխ 7. Ներքին տեղեկատվության օգտագործման սահմանափակումը խախտելը

- 1) Օրենքի, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերի և Բոքսայի կանոնների խախտումով ներքին տեղեկության օգտագործմամբ շուկայում գործողություն կատարելը, այդ թվում ներքին տեղեկության տրամադրելը, դրա հիման վրա խորհուրդ տալը կամ առաջարկություն անելը առաջացնում է՝

ա) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսունապատիկից մինչև երեք հարյուր հիսունապատիկի չափով և առևտրի իրավունքի կասեցում մեկ ամիս ժամկետով կամ

բ) անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

- 2) Սույն գլխի 1) կետում նշված կարգապահական խախտման համար սույն գլխի 1) կետի ա) ենթակետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից վեց ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը առաջացնում է՝

տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկի չափով և անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

Գլուխ 8. Շուկա ստեղծողին ներկայացվող պահանջների խախտումը

- 1) Առևտրային նստաշրջանի բացման պահից առավելագույնը տաս րոպե հետո մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը տվյալ դասի արժեթղթերով անընդհատ երկկողմանի գնանշում չապահովելը (բացառությամբ երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքի) առաջացնում է՝

ա) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը,

բ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երկրորդ անգամ,

գ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի յոթանասուհինգապատիկը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երրորդ անգամ,

դ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում չորրորդ անգամ,

ե) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, եթե խախտումը չի վերացվել մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկը,

զ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկի չափով և տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում, եթե խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկնվել է 5 (հինգ) և ավելի անգամ:

- 2) Երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում երեք թույլում նոր երկկողմանի գնանշում չապահովելն առաջացնում է՝

ա) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկը,

բ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երկրորդ անգամ,

գ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի յոթանաստիինգապատիկը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երրորդ անգամ,

դ) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում չորրորդ անգամ,

ե) տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորս հարյուրապատիկի չափով և տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում, եթե խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկնվել է 5 (հինգ) և ավելի անգամ:

- 3) Նույն առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ դասի արժեթղթերի երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առնվազն մեկ գործարք չկնքելն առաջացնում է՝

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում նվազագույն գնանշման ծավալի և/կամ սպրեդի պահանջների խախտման դեպքում Շուկա ստեղծողի կողմից «Շուկա ստեղծողի կանոններով» դրանց սահմանված չափերը չվերականգնելն առաջացնում է՝

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով խախտման չորրորդ և յուրաքանչյուր հաջորդ թույլի համար, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկը:

- 5) Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգում այնպիսի գործարք կնքելը, որի արդյունքում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում տեղի չի ունենում, առաջացնում է՝

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսունապատիկի չափով:

- 6) Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարվելու դեպքում վերահաշվարկված վճարների գումարը համապատասխան Հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չվճարելն առաջացնում է՝

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսունապատիկի չափով:

Գլուխ 9. Կարգապահական խախտման հետևանքով Հանձնաժողովի սահմանած տուգանքը չվճարելը

- 1) Կարգապահական խախտման հետևանքով Հանձնաժողովի «տուգանք» կարգապահական տույժի նշանակման մասին որոշմամբ սահմանված պարտադիր վճարը որոշման օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում չկատարելը առաջացնում է՝

տույժի նշանակում՝ տուգանքի վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար տուգանքի գումարի 1%-ի (մեկ տոկոսի) չափով, բայց ոչ ավել, քան տուգանքի գումարը՝ տուգանքը սահմանված ժամկետում վճարելու հանձնարարականով կամ առանց այդպիսի հանձնարարականի, եթե տույժի նշանակման օրվա դրությամբ տուգանքն արդեն վճարված է:

- 2) Սույն գլխի 1) կետում նշված կարգապահական խախտման համար սույն գլխի 1) կետով տրված հանձնարարականը սահմանված ժամկետում չկատարելը կամ տույժի չվճարումը առաջացնում է՝

անդամության կամ շուկային մասնակցության դադարեցում:

Գլուխ 10. Առևտրի կանոնների խախտումը

- 1) Շուկայի մասնակցի՝ բորսայական առևտրին մասնակցության իրավունքը կասեցվում է, եթե՝

ա) Շուկայի մասնակիցը Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» կամ «Պետական պարտատոմսերի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 8) կետի պահանջը կատարել է սահմանված ժամկետի խախտումով, սակայն նույն աշխատանքային օրվա ընթացքում և դրանով չի վտանգել (ձախողել) տվյալ առևտրային օրվա վերջնահաշվարկը՝ մեկ առևտրային օրով (Բորսան կարող է չկիրառել սույն ենթակետով սահմանված պատժամիջոցը, եթե Շուկայի մասնակիցը գրավոր դիմում է Բորսային պատժամիջոց չկիրառելու խնդրանքով և Բորսային ապացուցում է, որ ձեռնարկել է իրենից կախված բոլոր անհրաժեշտ միջոցառումները սահմանված պահանջը կատարելու համար և խախտումն արդյունք է եղել այնպիսի հանգամանքների ազդեցության, որոնք Շուկայի տվյալ մասնակիցը չէր կարող վերացնել ձեռնարկելով անհրաժեշտ միջոցառումներ),

բ) Շուկայի մասնակիցը չի կատարել Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» կամ «Պետական պարտատոմսերի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 8) կետի պահանջը՝ մեկ ամիս ժամկետով,

գ) Շուկայի տվյալ մասնակիցը չի վճարել Բորսայի կանոններով սահմանված միջնորդավճարը կամ այլ վճարը՝ մինչև դրանց վճարմանը հաջորդող առաջին օրվա առաջին առևտրային նստաշրջանի սկիզբը:

- 2) Շուկայի մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակցի կողմից ռեպո-հետադարձ գործարքի կնքման համար համապատասխան հայտերի ներկայացման ժամկետի խախտման դեպքում (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում Բորսայի կանոններով սահմանված կարգով հետաձգվում է ռեպո-հետադարձ գործարքի կնքման օրը) Շուկայի տվյալ մասնակիցը՝

ա) Բորսային վճարում է տուգանք՝ սահմանված ժամկետում չկնքված ռեպո-հետադարձ գործարքի գումարի 0.5%-ի (գրո ամբողջ հինգ տասնորդական տոկոս) չափով, իսկ ռեպո գործարքի մյուս կողմ հանդիսացող Շուկայի մասնակցին վճարում է տույժ՝ սահմանված ժամկետի խախտմամբ կնքված ռեպո-հետադարձ գործարքի գումարի 0.1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով՝ խախտման յուրաքանչյուր օրվա համար, եթե ռեպո-հետադարձ գործարքը կնքվել է սահմանված ժամկետի ավարտից հետո 5 (հինգ) օրվա ընթացքում,

բ) Բորսային և ռեպո գործարքի մյուս կողմ հանդիսացող Շուկայի մասնակցին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուրին խախտման արդյունքում չկնքված ռեպո-հետադարձ գործարքի գումարի 2.5%-ի (երկու ամբողջ հինգ տասնորդական տոկոս) չափով, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, եթե ռեպո-հետադարձ գործարքը չի կնքվել սույն կետի ա) ենթակետում սահմանված ժամկետում:

Գլուխ 11. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում Օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Սույն կանոններում խստացնող նորմեր պարունակող կետերը կամ ենթակետերը ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից գրանցվելուց վեց ամիս հետո:

Հաստատված է
«ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Արմեն Մելիքյան**

«30» հունիսի 2009թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/113L